պահպանել, տզրուկների նման ամենաանխիղճ կերպով ծը-ծում են գիւղացի ժողովրդի արիւնը, անխնայօրէն հարբ-ստահարում, կեղեքում և օրըստօրէ աւելի ու աւելի դառ-նացնում աշխատաւոր գիւղացու կեանքը։ Խեղճ գիւղացի-ներն առաւօտից մինչև երեկոյ աշխատում են, տքնում, չարչարւում, վարում, ցանում և սակայն դարձեալ չեն կա-րողանում իրենց չարատանջ վաստակի արդիւնքը վայելել և մնում են միշտ տնտեսական անձուկ կացութեան մէջ։

Այս մռայլ պատկերի վրայ աւելացնենք և՛ երաշտը, որ շատ անգամ չորացնում, փչացնում է մեծամասնութեամբ ցորենի, գարու արտերը, արօտատեղիները և տնտեսապէս աւելի քայքայում խեղճ գիւղացիութեան և նա յուսահատ գաղթում է մի գիւղից միւս գիւղը. բայց այնտեղ էլ միևնոյն ցաւը կրկնւում է և այսպէս անվերջ . . .

Աւազակային հարուստահարութիւններ: Ով շատ ու քիչ ուսումնասիրել է Փէրիալի անցեալի արհաւրալից կեանքը և հետևել է ներկայի մեծ վայրիվարումներին՝ նա անշուշտ նկա-տած կը լինի այն հանգամանքը, որ գաւառի հայ գիւղա-ցիութեան ճակատագրի տնօրինողը միշտ եղել են և այսօր էլ շարունակում են լինել այնտեղի մութ տարրերը, որոնց թիւը մանաւանդ այս գաւառում շատ է և մէկը միւսից յայտնի իրենց վանդալական սխրագործութիւններով։ Նրանք միշտ էլ յարձակւել են գիւղերի վրայ ու ալան-թալանի են-թարկել խեղճ գիւղացիների ունեցած-չունեցածը։ Փէրիալի թէկուզ մօտիկ անցեալի պատմութիւնը լի է կողոպուտի և աւերածութեան հարիւրաւոր փաստերով։

Ահա աւազակային պարբերաբար կրկնւող այդ հարստա-հարութիւններն ու կեղեքումները հնարաւորութիւն չեն տա-լիս երկրագործական կուլտը առաջ տանելու, մի երևոյթ, որն ընդհանուր է այս դժբաղդ գաւառում և որի պատճա-ռով գիւղերի դրութիւնը գնալով վատթարանում է թէ քաղաքականապէս և թէ տնտեսապէս։

Նա մանաւանդ այսօր, գիւղերի շրջակայքում տիրում է